



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1885 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Բ.

31 ՄԱՅԻՍ 1885



Կ. ՊՕԼԵՍ

1885



# ԳԻՒԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՄԱՅԻ ԳԻՒՄՆ

Տիգրան	Լ.Ֆէնտի	Եռասուֆեան	Ա. Արեւշէր
Յովհաննէս	»	Թորոսեան	Բ. »
Յարութիւն	»	Թիրեաքեան	Գ. »
Յակոբ	»	Գուրգէն	Ա. Արեւշէր
Մինաս	»	Չերազ	Բ. »
Մկրտիչ	»	Մէլիքեան	Գ. »



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԿՐԹԱԳՐԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆ



# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1885 ԱՄԻ

ՀԻՍՏ Բ.

31 Մ Ա. Յ Ի Ս 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Սրբազան Պատրիարք Հայր .  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էփէնտի Եուսուֆեան .

## ՕՐԱԿԱՐԳ

- Ա. — Ատենական գործողութիւնք .
- Բ. — Կազմութիւն Նախաքննիչ-Գիււանաց .

Ընդ Նախագահութեամբ Սրբազան Պատրիարք Հօր, Ատենապետ Եուսուֆեան Տիգրան Էփէնտի առեւանջ րացաւ ի ժամ 3 1/2, ի ներկայութեան 32 Երեսփոխանաց, որոց թիւն ի վերջէ կճի յանգեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըստ օրինի տտենական գործողութեանց շանցած, թոյլ տուք ինձ, Տեարք Երեսփոխանք, իմ ջերմ շնորհակալիքս յայտնել Ձեզ այն մեծ պատուոյն համար զոր ընծայեցիք վերատին կոչելով զիս Ատենապետութիւն Պատրի ժողովոյք : Եւ թէպէտ ո՛չ ի բաւուր ունէի ո՛չ ալ կարողութիւն վերջնորուերու համար, և մտադրած էի ո՛ր և է գործոն պաշտօն չ'ըստանձնել այս տարի և իր պարզ երեսփոխան աշխատակցիլ միայն, ըլլ

բարձմանց ծանրութեան պատճառաւ, սակայն երկու պարագայներ հարկադրեցին զիս հարտակիլ Ձեր որոշման : Նախ, ես Ձեր այն պաշտօնակիցներէն եմ որք Սահմանադրութիւնն ըմբռնած են իրաւանց և պարտուց կրկին տեսակէտներով, վասն զի գիտէք թէ Սահմանադրութիւնն՝ մեզ տուած իրաւանց հետ, պարտականութիւնն ալ կը դնէ մեր վրայ, այն է՝ րաց ի ազգային տրոյ մասնակցութենէն՝ կատարել մեզ յանձնուած պաշտօններն : Այս Սահմանադրական պարտականութիւնն է ահա որ կը մղէ զիս գլխաւորաբար և յետոյ, բացառիկ պարագայ մը կայ, այն է ներկայութիւնն մեր նորընտիր Ս. Պատրիարք Հօր, որ առաջին անգամ կազար բանալ ժողովս : Ուստի, որքան ալ շատ լինին զբաղումներն և ինձ յանձնուած պաշտօնը կարի ծանր, պատշաճ չ'համարեցի իմ հրաժարումս զժուարութիւն



յարուցանել առաջին օրէն որ պատիւ կունենանք Նորին Սրբազնութեան Նախագահութիւնն վայելելու :

Վատահելով ուրեմն Գիւանի միւս Պատարաւոնտեկցաց սնտկցութեան վրայ և յուսուելով որ ժողովը պիտի չարունակէ ցոյց տալ մեզ նկատմամբ այն օրինակութիւնն , վրաստածութիւնն և համակրանքը զոր վայելեցինք անցեալ տարի , կ'անցնիմ օրուան խնդրոց :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա .

Ատենական գործողութիւնք .

1 .

Վաւերացումն ժ.Ձ. ժ.Է. ժ.Ը. և Ի. նիստերու ատենագրութեանց

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅԻ . — Ժողովոյդ վաւերացման կը ներկայեմ անցեալ շրջանի տասնութեցերորդէ սկսեալ մինչև վախճան քանորդ նիստերու ատենագրութիւնն կարգաւ :

Ձայս ատելով Ատենապետ Լ.Ֆէնտի , ժ.Ձ. նստի ատենագրութիւնն ժողովոյ վաւերացման կ'ենթարկէ :

ԹԻՒՂԵՆՏՃԵԱՆ Ն. ԷՅԻ . — Երես 389 , էջ Բ. տող 33րդ « Թիւլպէնտէան » բառին բովի ( շ . ) սկզբնատաւը ն. պիտի լինի :

— Նոյն երես , նոյն էջ , տող 33-34 , « Երուսաղէմայ խնդիրն » պիտի լինի ' « Երուսաղէմայ պարտուց խնդիրն » :

— Երես 390 , էջ Ա. տող 11րդ « ցարդ » բառէն ետքը պիտի դրուի « այն խնդրոյն մէջ » բառերն ևս :

— Նոյն երես , նոյն էջ , տող 14րդ « չու » նի ձեռնհասութեան » պիտի լինի « չուի ձեռնհասութիւն » :

Ի վերջոյ դիտել կ'տամ նաև Պատկ. Մայր Գիւանին թէ՛ և իմ բոլոր երեսօնականներէ զրութեանց ներկեր « Նիկողայոս Մ. Թիւլպէնտէան » կատարողներով և ոչ երբէք « Ն. Թիւլպէնտէան » կամ « Նիկողոս Թիւլպէնտէան » , որ սխալ է և սակայն Ազգ. ժողովոյ Ատենագրութեանց պարունակած իմ պաշտօնագրոցս մեծ մասին մէջ այսպէս սխալ նշանակել կը տեսնուի իմ անունն ու ստորագրութիւնը . ուստի կ'ինչդրեմ Պատկ. Մայր-Գիւանէն որ ուշադրութիւն դարձնէ այսուհետև Ատենագրութեանց մէջ իմ անունն ու ստորագրութիւնն , ինչպէս նաև ինձ ուղղեալ հրաւիրագիր նամակաց վրայի հասցէին մէջ՝ « Սաւանակ » « Նիկողոս » աղաւաղեալ բառին , ըստ իմ բնազդին՝ բուն ուղիղ և ճիշդ բաւը « Նիկողայոս » գրուելուն :

ԹՆԿԵԱՆ Ա. ԷՅԻ . — Երես 389 . սինակ Ա. 7րդ տողին մէջ նշանակեալ կէտերուն տեղ , վարչութեան հաստատած սա երկու նշանաւոր պարբերութիւններ պէտք է տրձանագրուին , բունի որ Ա. Երուսաղէմայ պարտուց մասին ըրած առաջարկութեանմ հիմ կը կողմէին և որ զունձ աւստած է :

« Բայց միթէ գաւառներ միայն պիտի հատուցանեն Երուսաղէմի պարտին , և միթէ « Կեդրոնն օգուտ բաղելով իւր վարչական « զորութիւնն » կը անտրե՛ն՝ կը անոր բովանդակ « ծանրութիւնը գաւառական մերազնէից թիւ « կանց վերայ՝ ընտելուորէ : — Ոչ երբէք : « Այս Հանգանակութիւն ընդհանուր է : Եւ յարելով , « բայց ըստ որում Պօլիս ղերծ է « զինտրական տուրքէ , և միւս արքունի տուրք « քերու բաշխում և հաւարումն Ազգին ձեռք « քօր չի կատարուիր , բնականաբար հարկ « պիտի ըլլայ Պօսոյ մէջ Երուսաղէմայ պարտ « տուց բարձման մասին ի նպատակ ուրոյն Հան .



« քանակութիւն մը կատարել՝ ըստ առաջնոյն, « բայց աւելի աղբուրութեամբ : »

**ԺԶ.** նստի ատենադրութեան վրայ ուրիշ զխտորութիւն ընող չ'իկնելով, Ատենադատ էֆէնտի բուէի կը դնէ զայն, որ կ'ը վ.Ա.Ի.Բ.Ա.ՆԱՅ հանդերձ եղած զխտորութեամբ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այժմ ԺԷ. նստի ատենադրութիւնն Ձեր վաւերացման կ'ենթարկեմ :

**ՓԱՓԱԶԵԱՆ Մ. ԷՖ.** — Կարծեմ այդ նըստին մէջն է որ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցութեան բուէարկութիւն կատարուած է. այդ նստին սկիզբն ներկայ էի և խօսք ալ ուզած եմ, ասկայն բուէարկութեան պաշտօն ներկայ չէի և չ'մասնակցեցայ այդ տեսակ բուէարկութեան մը : Կը խնդրեմ արձանագրել տաք այս պարագայն :

Ուրիշ ոչ որ զխտորութիւն ընելով, Ատենադատ էֆէնտի բուէի կը դնէ ԺԷ. նստի ատենադրութիւնն որ կ'ը վ.Ա.Ի.Բ.Ա.ՆԱՅ հանդերձ Փարիզեան էֆէնտի զխտորութեամբ :

Այս Ատենադատ էֆէնտի բուէի կը դրնէ ԺԸ. նստի ատենադրութիւնն որ կ'ը վ.Ա.Ի.Բ.Ա.ՆԱՅ առանց ո և է զխտորութեան :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — ԺԹ. րդ նստի ատենադրութեան վրայ զխտորութիւն ընող կա՞յ :

**ՋԵՐԱԶ Մ. ԷՖ.** — Էջ 442, Բ. սիւնակ. պէտք է դնել երրորդ հաստածի սկիզբն « Պալատէկնայի բարեփոխման նկատմամբ Ռուսհայոց կարծիքը շղարհելու առաւելութենէն զատ, » :

Էջ 446, Ա. սիւնակ, տող 16 պիտի լինի « 84/1 եղանակը կը հարուածէր մինչ ևս կը պաշտպանէի զայն, և այժմ կը ցարի 84/1 եղանակին. այսպէս ալ ըստ հաւանական է որ

պատուիրակութեան յղմանը դէմ ունեցած կարծիքը փոխէ գալ տարի. ուստի հարկ չէ որ այդ կարծիքը հերքելու հոգ տանիմ այսօր, մանաւանդ որ չեմ ուզեր կրկնել միևնոյն վրաստերն: Պալատ Արիւ երեւոյթականաց առաջարկներուն . . . » :

**Բ. սիւնակ, տող 2.** « սնորհնութեան » պիտի լինի « լիազօր սնորհնութեան » :

Տող 6 պիտի լինի « չը պիտի համարձակիմ ստունձնել այցբան ծանր պատասխանատուութիւն մը » :

**Ժարդն նոյնպէս կ'ը վ.Ա.Ի.Բ.Ա.ՆԱՅ ԺԹ.** նստի ատենադրութիւնն, հանդերձ եղած զխտորութեամբ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը մնայ այժմ միայն փակման ի. րդ նստի ատենադրութիւնն, որ նոյնպէս ժողովոյդ վաւերացման կը ներկայեմ :

**ԹԻԿՊԵՏՏԵԱՆ Ն. ԷՖ.** — Այդ նստի ետին ցանկ մը կայ որ ցոյց կուտայ ամբողջ շրջանին մէջ ժողովոյն ներկայացուել խնդրոց վիճակը: Այդ ցանկի մէջ, թեմական առաջնորդաց նկատմամբ իմ ըրած հարցմանս գէ՛մ՝ աւարտեալ նշանակուած է ո բայց կարծեմ այդ հարցման պատասխանն տակաւին չ'եկու, հետեւարար աւարտեալ չ'է և սլտք էր նշանակել յղեալ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ձեր այդ հարցողիւն, թիւլեւտձեան էֆէնտի, ժամանակին յղուած է վարչութեան պարզապէս ի նկատաւումն, ուստի և աւարտեալ նշանակուած է: Իսկ եթէ կուզէք, կրնամ վերցնել « աւարտեալ » ըստն :

**ԻԶՄԻԼԵԱՆՏ Մ. ԵՊԻՍԿ.** — Թիւլեւտձեան էֆէնտիի այդ զիրն ժամանակին յանձնուած էր կրօնական ժողովոյն, որ նկատելով թէ խնդրոյն վրայ որչա՛մ տալն իւր ձեռնհա-



առթեանն զեր է, ներկայած է զայն Համագու-  
մար Ժողովին : Ստիպյն Համագումար Ժողո-  
վյա Ս. Նրաբագահն նոր տնցած լինելով ի զը-  
լուս իւր պաշտաման, ժամանակ շեղա սյղ մա-  
սին հարկ եղածն առ Պատի. Ժողովդ տեղե-  
կագրելու, բայց կը յուսամ թէ ըրչ ատենէն  
նկատողութեան կ'առնուի :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Թիւրքնաճեան  
էֆ. ի յիշատակած ցանկին մէջ ուրիշ մէկ քա-  
նի թէրութիւններ ալ նշմարեցի, բայց ժո-  
մանակ չուենալով զայնս տղղել և այսօր Գի-  
ւանիդ ներկայել, առաջին առթիւ պիտի կա-  
րենամ ընել :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Լաւ : Էթէ ուրիշ  
դիտողութիւն ընող չկայ, ի. բք նստի ատե-  
նագրութիւնն ևս Ձեր վաւերացման կ'են-  
թարկեմ :

Ուրիշ դիտողութիւն չ'իներով, Ատենա-  
պետ Էֆէնտի Ժողովոյ վաւերացման կ'ենթար-  
կէ ի. բք նստի ատենագրութիւնն որ կը ՉԱ.  
ԻճԻԷ հանդերձ եղած դիտողութեամբ :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Կարծեմ անցեալ 83  
չըջանէն ձեռքած մէկ քանի անտիպ ատենա-  
գրութիւններ ալ կան + երբ պիտի գան :

**ԳՈՐԿԷՆ Յ. ԷՖ.** — ( Ատենաղայիր ) Ձեր  
Դիւանն պիտի ջանայ ոչ միայն ներկայ  
չըջանին մէջ տեղի ունենալիք նիստերու ատե-  
նագրութիւնք ժամանակին և կանոնադրապէս  
հասցնել, այլ և անցեալ շըջանէն ձեռքեալ  
ներէն ևս մէկ մէկ հատ տպագրել տալ զէթ-  
երկու ամիսն մի անգամ :

**ՁԱՅՆԵՐ** — Շնորհակալ ենք :

երեսպիսանական հրատարակիչ Ռուբին ԷՖ.  
Կիւմիւշկերտանեանի

Ատենապետ Էֆէնտի Ժողովին կը ներ-  
կայէ Կիւմիւշկերտան Ռուբին Էֆ. ի հետեւալ  
հրատարակիչն :

**Վեմամբայլ Ատենապետ Էֆէնտի  
Ազգային Ժողովոյ,**

Քսան և հինգ տարի է ի վեր զանա-  
զան պաշտօններ, զորս սիրելի Ազգս-  
ինձ յանձնեց, խղճի մտօք կատարեցի ըստ  
կարի, բայց այժմ տկար եմ, հետեա-  
բար կարող չեմ ու իցէ Ազգային պաշ-  
տօն յանձն առնուլ. ուստի հրաժարելով  
Երեսպիսանութենէս, կը խնդրեմ Պատ-  
կառելի Ժողովէդ, որ բարեհաճի ընդու-  
նիլ իմ հրաժարում, սա պայմանաւ որ  
եթէ կազուրիմ դարձեալ ընդունիմ  
պաշտօն :

Յատկապէս իմ խորին շնորհակա-  
լութիւններս ժողովոյդ և զիս ընտրող  
ազգայնոց մատուցանելով

Մ'նամ Ձեզ և Ազգիս խոնարհ ծառայ  
Ռ. Կիւմիւշկերտանեան  
31 Մայիս 1883

**ԹՆԿՐԵԱՆ Ա. ԷՖ.** — Այդ զիրն ոչ թէ  
հրատարական, այլ պարզապէս դադարում կը  
նշանակէ :

**ՄԷԼԻԻԲԱՆ Մ. ԷՖ.** — Ոչ, պարզ հա-  
ժարուկան մ'է :

Ձանազան նատարաններէ երեսպիսանք  
ձայնալցելով Մէլիբեան Էֆ. ի, Ատենապետ



էֆէնտի քուէի կը զնէ սոյն երեսփոխանական հրատարագիրն, որ կ'ընդունուի մէկ քուէի զէմ միաձայնութեամբ :

Հետեւարար Ատենայեալ Էֆէնտի երեսփոխանութենէ հրատարեալ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ զՌուբէն Էֆէնտի կիսմիւլիքտանեան :

3.

Հրատարագիր Միմա Չերազ ԷՖ.ի ի Դեր Ատենադպրութեան Մայր-Դիւանի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանիս նորընտիր անդամներէն Չերազ Էֆ. ևս հետեւեալ հրատարագիրն զրկած է :

Բարձրաշնորհ Սրբազան Հայր,

Պատիւ ունեցայ ստանալ Ձեր Սըրբազնութեան պաշտօնագիրն, և կը վաւրժամ պատասխանել թէ, 1883ի փորձէս ի վեր, որոշած եմ չ'ընդունիլ երբէք Ազգային Ժողովի Ատենադպրութեան պաշտօնն :

Եմ միշտ, Բարձրաշնորհ Սրբազան Հայր,

Ազգիս և Ձեզ անձնուէր

Մ. Չերազ

Բէրա

29 Մայիս 1885

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն հրատարագիրն միայ զխողովութիւն ընող կա՞յ :

ԹԻՒԼՊԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ. — Չերազ Էֆէնտի իւր այդ գրոյն մէջ զփութեամբ պատճառ մը կը նշանակէ, բայց ինչ որ ալ լիցայ այդ պատճառն, այդ ձև հրատարական մը ընաւ

պատուարեր չէ Ժողովոյս համար : Ուստի զայն մերժել կառաջարկեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէտք է ընդունիլ հրատարական և ըստ ներքին Կանոնագրի՝ յաջորդն նշանակել իւր Բ. րդ Ատենադպր :

ՍԸՎԱՋԵԱՆ Կ. ԷՖ. — Ես կը ցաւում որ Չերազ Էֆ.ի նման փորձ երեսփոխան մը կը մերժէ ընդունիլ պաշտօն Դիւանին մէջ : Ուստի կառաջարկեմ ցատելով հանդերձ ընդունիլ իւր հրատարական :

ՃԱՆԸՄԵԱՆ Մ. ԷՖ. — Պատճառարանեալ է այդ հրատարականն և չէ կարելի ընդունիլ զայն : Հարկ է իմանալ պատճառն :

ՄԷՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Դիւանն տակաւին չի յայտարարեց իմ միմէ՞ տեղի կայ այդ գիրն Ժողովոյս համար անպատուարեր նրատեւու, ինչպէս զիտել տալին ոմանք : Եթէ Դիւանն այդ յայտարարութիւնն ընէ, խոզիրն ինքնին կը վերջանայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Վերստին ընթեռնելով Չերազ ԷՖ.ի հրատարագիրն) Ինչպէս կը տեսնէք, Չերազ Էֆէնտի կըսէ թէ՛ « 1883ի փորձէս յետոյ » այս կէտն իւր անձին կը վերաբերի և բնաւ անոր մէջ անպատուարեր նու կատելու դիտում մը չկայ :

Չոյս յայտարարելէ յետոյ քուէի կը զընեմ Չերազ Մ. Էֆ.ի հրատարագիրն յերկրորդ Ատենադպրութենէ. ով որ զայն ընդունելու կողմն է, թող համէր տող իւր բուէն :

Հետեւարար բուէարկութիւն կատարուելով, Ժողովն 1 քուէի զէմ միաձայնութեամբ ԿԸՆԴՈՒՆԻ զայս պարզ հրատարագիր :



(Սոյն քուէարկութենէն յետոյ , Ատենապետ էֆէնտի կը հրահարէ զՄկրտիչ էֆէնտի Մէլիբեան , իբր երրորդ Ատենադպիր անցնիլ ի Գիւան , որ կը յայտնէ թէ ինքն ալ չէ կարող ու եւ է սլաշտօն ստանձնել Գիւանին մէջ :

4.

Տեղեկագիր եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան եւ բողոքագիր Տ. Վանան Վրդ. Տ. Մինասեանի .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութեանց կարգին մէջ ունիմք նաև վեց եկեղեցական Երեսփոխանաց ընտրութեան տեղեկագիրն . . . :

ՓՍՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Աղգային ժողովոյ բացման պահուն Երեսփոխանական ընտրութեանց վաւերացումը Օրակարգի վերաբերեալ խնդիր է և չէ կարելի ատենական գործողութեանց շարքին մէջ դասել զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ամեն անգամ Երեսփոխանի մը ընտրութեան վաւերացումը ատենական գործողութեանց պահուն կատարուած է , հետևարար այս անգամ ևս ըստ այնմ կրնամք շարժիլ :

ՓՍՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Բացոյ ոչ երբէք Աղգ. ժողովոյ բացման պահուն , բանզի ներքին կանոնագիրը Երեսփոխանական ընտրութեանց վաւերացումն Օրակարգի խնդիր ընդունած է : Ուստի հարկ է այդ խնդիրն ևս վերապահել Օրակարգին և ձեռք առնուլ ատենական գործողութեանց վերաբերեալ ուրիշ գիր , եթէ կայ :

Ատենապետ էֆէնտի առ այս ժողովոյն կամացը կը դիմէ որ ԿՈՐՈՇԷ նախ վաւերել Երեսփոխանական ընտրութիւնը և ապա անցնիլ Օրակարգի խնդրոց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Վիճակու դադարեալ և սրակասեալ վեց եկեղեցական Երեսփոխանաց ընտրութիւնն կատարուած և տեղեկագիրն հանդերձ ընտրելոյ յանձնառագրերով աւանդուած է Գիւանիս , զոր կը ներկայեմ Ժողովոյէ ընդունելութեան :

Զայս ատելով , Ատենապետ էֆէնտի կը հրահարէ զԱտենադպիր էֆէնտի ընթեմնուլ յիշեալ տեղեկագիրն :

Ամենապատիւ Սրբազան Պատր. Հայր Նախագահ Աղգ. Պատկառելի Ժողովոյ ,

Թէ վիճակու դադարեալ և թէ սրկասեալ եկեղեցական Երեսփոխանաց տեղնոր ընտրութիւնն ըստ հրահանգի Ձերդ Բարձր Սրբազնութեան կատարուելով է 16 Մայիս յԱղգային Պատրիարքարանի տեսնուեցաւ որ հարիւր վաթսուն և երեք ընտրողներէն քուէարկութեան մասնակցած են անձամբ երեսուն , իսկ նամակաւ իննսուն և չորս , և առաջին վիճակի համար քուէից բացարձակ առաւելութեամբ ընտրեցան

Տէր Սիմէօն Ս. Եպիսկոպոս Սէֆէրեան 69 քուէիւ .

Տէր Գեորգ Վարդապետ Իւթիւճեան 71 քուէիւ .

Իսկ համամտականի մնացին

Տէր Արիստակէս Ս. Եպիսկոպոս Դերձակեան 58 քուէիւ .

Տէր Կարապետ Գահանայ Սէթեան 54 քուէիւ .



Տէր Խաչատուր Քահանայ Տ. Գաբ. րիէլեան 37 քուէիւ .

Տէր Արիստակէս Քահանայ Մամբ. րէեան 32 քուէիւ .

Երրորդ վիճակի համար քուէից բացարձակ առաւելութիւն ստացող չգըտնուելով՝ համեմատականի մնացին՝

Տէր Տաճատ վարդապետ Ոսկանեան 14 քուէիւ .

Տէր Յովհաննէս Քահանայ Շահպաղեան 10 քուէիւ :

Նոյնպէս չորրորդ վիճակի համար ևս քուէից առաւելութիւն չգոյանալով՝ համեմատականի մնացին

Տէր Թադէոս Քահանայ Սիմօնեան 23 քուէիւ .

Տէր Վահան Քահանայ Գրիգորեան 20 քուէիւ .

Ամեն . Սրբազան Տէր .

Ըստ հրամանի Ձերդ Բարձր Սրբազանութեան, այսօր երկրորդ անգամ քուէարկութեան և քուէհամարի գործողութիւնք կատարուելով յԱղբալին Պատրիարքարանի, հարիւր վաթսուն երեք ընտրողներէն քուէարկութեան մասնակցեցան 28 անձամբ և 71 նամակաւ, և առաջին վիճակէն պակասժ երկու երեսփոխանաց տեղ ընտրուեցան՝

Տէր Արիստակէս Ս. Եպիսկոպոս Դերձակեան 78 քուէիւ .

Տէր Խաչատուր Քահանայ Տ. Գաբ. րիէլեան 44 քուէիւ .

Երրորդ վիճակի համար ընտրուեցաւ

Տէր Յովհաննէս Քահանայ Շահպաղեան 39 քուէիւ .

Չորրորդ վիճակի համար ընտրուեցաւ

Տէր Վահան Քահանայ Գրիգորեան 48 քուէիւ :

Հետեւաբար դադարեալ և պակասեալ վեց եկեղեցական Երեսփոխանաց նոր ընտրութիւնն կատարուելով պահանջուած վեց անդամոց թիւն ամբողջացաւ :

Չայս առաջի առնելով Ձերումդ Բարձու Սրբազնութեան ,

Մնամք ամենախորին յարգանքք

Անդամք հսկող Մասնախմբին

Ատենադպիր

Ատենապետ

Գ.Վ. Խրքումեան Սուքիաս Քնյ Ստեփաննոսեան

Տ. Խորեն Քանանայ Փենիլվանեան

27 Մայիս 1885

Ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլսոյ

ԱՏՏԵՆԱԴՊԻՐ ԷՅՑ. — Դիւանիս վրայ եւ նաև ընտրելոց յանձնառարներն , բայց յիշոյն՝ որոյ յանձնառարին յղումն Ս. Նստադահէն ապահովեալ է : Ժողովդ կուղէ՞ արդեօր լսել և նոյն յանձնառարներն :

ՁԱՏՆԵՐ. — Պարզ ե՞ն պէ յանձնառարերն :

ԱՏՏԵՆԱԴՊԻՐ ԷՅՑ. — Այո :

Ատենադպիր էֆէնտիի սոյն ծանօթութեան վրայ ժողովն հարկ չտեսներ լսել նաև յանձնառարոց պարունակութիւնն :

ԱՏՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Սոյն ընտրութիւնք Ձեր վաւերոցման ներկայելէ յառաջ , հարկ կը համարիմ ժողովոյդ ներկայել Տ. Մինաս .



եան վաճան վարդապետի մի բողոքագիրն որ յարահայտութիւն ունի այն տեղեկագրին :

Ահաւասիկ այդ բողոքագիրն :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Ժողովոյ ,

Որովհետեւ Եկեղեցական Երեսփոխանաց ընտրութեան նկատմամբ այլ ընդայլոյ հրատարակութիւնք եղան յազգային թերթս , իբր թէ ես ինքս խարդախութիւն գործած լինիմ քուէհամարի գործողութեան մէջ , որովհետեւ հրատարակուեցաւ թէ կրօն. Ժողովն զիս ընտրելու թեան իրաւունքէ զրկեալ վճռած է , և ըստ այնմ համեմատական քուէարկութեան մէջ իմ անունն ջնջուած տեսայ ,

Կը խնդրեմ որ Պատկ. Ժողովդ հասի նախապէս քննութեան յանձնել այդ ընտրութեան խնդիրը , որպէս զի երևան ելնէ խարդախութեան բուն հեղինակն , եթէ կայ , քանզի ես իբրև ամբաստանեալ ոչ հարցուեցայ , ոչ քննուեցայ , և ոչ դատուեցայ , մինչդեռ քննութիւն պահանջող գրաւոր բողոքալ տուած էի :

Մնամ խորին յարգանքք

Ազգային Երեսփոխան

Վանան Վրդ. Պարտիզակցի

1885 Մայիս 31

Ղալաթիա

ՆԱԽԱԳԱՆ ԱՐԲԱՋԱՆ — Խօսք կուզեմ : Բողոքարկու վարդապետը ինքն իրատեստ տուած է քննութենէ : Առաջին քուէհամարի ժամանակ վաճան վարդապետ ներկայ էր և ինքն էր արձանագրողն , և երկրորդ քուէհամարի միջոցին , որ կրօն. Ժողովոյ մէջ կատարուեցաւ , զարձեւալ իր ներկայութեան քուէներն համբը-

ուեցան , քննուեցան և հաստատուեցաւ որ խարդախութիւն գործած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՏ. — Վաճան վարդապետ քննութիւն կը պահանջէ , առարկելով թէ յանցաւորը ինքը չէ , ոտտի պարտ էր իւր բողոքագիրն ուղղակի Սրբազնութեանդ և կամ կրօն. Ժողովոյ մատուցանել որ զարժանն տնօրինէ :

ՆԱԽԱԳԱՆ ԱՐԲԱՋԱՆ — Կրօնական Ժողովն այս խնդիրը նորէն քննելու պէտք չունի , վասն զի ընտրութեան տեղեկագիրը վաւերացնելովն հաստատեց նախորդ քուէհամարի մէջ տեղի ունեցած զեղծումն և խարդախութիւնը : Կը զարմանամ թէ ի՞նչպէս այժմ ելեր Ազգային Ժողովիդ կը բողոքէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՏ. — Այդ խարդախութեան իբրև հեղինակ դատաւարուեալ ունն վերաքննութիւն պահանջելուն համար է , Սրբազան Հայր , որ Դիւանս կ'առաջարկէ բողոքագիրն վերադարձնել առ Զերդ Սրբազնութիւնն :

ՊԵՐՇԵՊԵՆԱՆ Ռ. ԷՏ. — Սրբազան Պատրիարք Հայրն կը յայտնէ թէ՛ արդէն տեղի ունեցած խարդախութիւնն ստուգուած է :

ՄԵՐԵՏՎ-ԳՈՒՂԻ Յ. ԷՏ. — Խնդիրը ներկայացաւ ի սկզբուն Եկեղեցական Երեսփոխանի մը՝ առանց քննութեան և դատաստանի դատաւարուելուն դէմ բողոքելուն առթիւ . այժմ Ս. Պատրիարք Հօր մեզ տուած բացատրութիւններէն յետոյ , խնդիրն իւր կերպարանքը կը փոխէ , քանի որ Ն. Սրբազնութիւնն կը յայտարարէ որ խարդախութիւն գործուած չէնէն ստուգուած է : Երեսփոխանական Ժողովս միայն այն սրտագային մէջ կրնայ նկատողութեան տունը բողոքագիր մը , երբ Ս. Պատրիարք Հօր կամ կրօն. Ժողովոյն դէմ ուղղակի ամբաստանագիր մը ըլլայ : Առտի այս պարագայիս մէջ Վաճան վարդապետ պարտի Ն. Սրբազնութեան ներկայացնել իւր խնդրագիրն և ոչ թէ Ժողովոյս :



**Տ. ՄԻՆԱՍԵԱՆ Վ. ՎՐԴ.** — Ես այս խնդիրն հաս յուզել չէի ուզեր և պարտալ տեղ ժողովի քամախմուտ ընել, բայց ինչ և է, հին հաշիւներ կան, թո՛ղ մարտին: Եկեղեցական երեսփոխանաց քուէարկութեան օրն Ս. Պատրիարք Հայրն ներկայ չէր, և ինչ որ խնայած է, իւրոյ խնայած է. կրնայ ըլլալ որ խնդիրն սխալ կերպիւ հասկցուցած լինին Ն. Սրբաղնութեան:

Ես սխիտ խնդրեմ որ Ազգային ժողովոյ կողմէ Գանձախոսումը մը կազմուի որ քննէ թէ է՞ս եւ՞ յանցաւորն թէ՛ ուրիշները:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Վաճան վարդապետ կ'առաջարկէ քննիչ Գանձախոսումը մը կազմել: Այլ զիւանս կը պնդէ թէ իւր բողոքն պարտի Ս. Պատրիարք Հօր ներկայացնել ըստ օրինի: Կուզէ՞ր որ քուէի դնեմ այս առաջարկն:

( Յեռգում )

**ՁԱՅՆԵՐ** — Ո՛չ, ո՛չ. Սրբազան Պատրիարք Հօր բացատրութեան յետոյ, չեմք կրնար ընդունիլ այդ տեսակ առաջարկութիւններ:

**Տ. ՄԻՆԱՍԵԱՆ Վ. ՎՐԴ.** — Խօսք կուզե՛մ:

**ՁԱՆԱԶԱՆ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ.** — Փակու՛մ, փակումն վիճարանութեան:

**Տ. ՏԱՀԱՏ ՎՐԴ. ՈՍԿԱՆԵԱՆ.** — ( Անշում կրօն. ժողովոյ ) Իբր անդամ քննիչ Գանձախօղովոյ՝ ես ալ խօսք կուզեմ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Դիւանս այս պարագային մէջ չէ կարող Ձեզ խօսք տալ, Տաճառ վարդապետ, ըստ որում իբր կրօն. ժողովոյ անդամ միայն իրաւունք ունիք խօսք տանուլ:

**Տ. ՏԱՀԱՏ ՎՐԴ. ՈՍԿԱՆԵԱՆ.** — Իբր վարչութեան անդամ միշտ իրաւունք ունիմ խօսելու:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Իրաւունք ունի խօսելու:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Սխալ է՛ք:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Խօսք կուզե՛մ:

( Զանազան նստարաններէ Երեւոխոսանք վերատին քուէարկութեան փակումը կը պահանջեն — աղմուկը յատենուտ ):

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը տեսնէք Տեարք, որ ժողովն վիճարանութեան փակումը կը պահանջէ: Ուստի առ այս կը դիմեմ Ձեր քուէին:

Ձայս յայտարարելով, Ատենապետ Էֆէնտի քուէի կը դնէ վիճարանութեան փակումը որ կը ԿՐԻՍՏԻՆՈՒԻ ԳԻՂԷՄ միաձայնութեամբ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Վիճարանութիւնը փակուած է: Այժմ որոնք որ Ս. Պատրիարք Հօր տուած բացատրութենէ վերջ՝ այլ ևս բնութեան պէտքն չեն տեսներ, թող հաճին իրենց ձեռնածիք հաւանութիւն յայտնել, չետեսեալ բանաձև ին վրայ:

« Ազգային ժողովն լսելէ յետոյ Ս. Պատրիարք Հօր բացատրութիւնները, կը յայտարարէ թէ տեղի չկայ քննութիւն կատարել իւր կողմէ, և թէ, Վաճան վարդապետ եթէ ուզէ, կրնայ ուղղակի Ս. Պատրիարք Հօր դիմել իրեն դէմ արուած վճայն վերայնուտեմ թեանն համար:

Քուէարկութիւն կատարուելով, ժողովն 4ի դէմ միաձայնութեամբ կՐԻՍՏԻՆՈՒՆԻ այն բանաձևն:

( Յետ քուէարկութեան )

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Միշտ քննութիւն ընելու պարտք ունի այս ժողովն:



ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. -- Այ՛, երբ քըն-  
նուելին կը պահանջէ վաճան վարդապետ ,  
պէտք է կատարել այդ բննութիւնը : Այս ժո-  
ղովս շատ բարձր է և բնաւ կատու չունի ու-  
րիշէն :

( Աղմուկ եւ ղիփոքոքիւն )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. -- ( Առ. Մամիկոնեան  
Մ. ԷՖ. ) Յառաջի է որ, Մամիկոնեան էֆէնտի ,  
ժողովոյս օրէնքներն գիտցող երեսփոխան մը  
լինելով հանդերձ , նորա բուէն զննադատելու  
կենէ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. -- Օրինական ղիտո-  
ղութեան մը համար խօսք կուզեմ : -- Քանի  
որ յայտուեցաւ թէ Եկեղեցական երեսփոխա-  
նաց ընտրութեան մէջ խորհրդաւորութիւն և զեղ-  
ծում գործուած է , ըստ օրինի պէտք է որ  
այդ ընտրութիւնն բեկանի և նոր ընտրութիւն  
կատարուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. -- Պահ մ'առաջ այս մա-  
սին ժողովոյս առած որոշումը ո և է կերպիւ  
մէկ կողմ ձգել տալու միտում տնեցող սր և է  
ստաջարկ չկրնար նկատողութեան առնուիլ  
այլևս : Խնդիրը փակուած է :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. -- Խմ ըրածս օրինա-  
կան ստաջարկութիւն մ'էր , Ատենապետ է-  
ֆէնտի , և բնաւ այդ տեսակ միտում մը չէր  
սլորունակէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. -- Քանի որ վաճան վար-  
դապետի բողոքագրին ժողովոյս կողմանէ նկա-  
տողութեան առնուիլն մերժուեցաւ, եղած ընտ-  
րութիւնն բեկանելու ստաջարկն հակասական  
կըլլայ : Ուստի տեղեկագրին օրինաւորութեանը  
վրայ եթէ ուրիշ ղիտողութիւն ընող չկայ , Ձեր  
բուէին պիտի ենթարկեմ զայն :

Ձայս անելով Ատենապետ էֆէնտի քուէի  
կը դնէ այն տեղեկագրին օրինաւորութիւնն որ  
ԿԸՆԴԻՆՈՒՄ 4 քուէի դէմ միտածայնութեամբ

Հեռաւորաւ Ատենապետ էֆէնտի եկեղե-  
ցական դասէն Աղք. երեսփոխան կը ՀԻՉԱԿԷ

Սիմէօն	Եղիակոյս	Սէֆէրեան
Արիստակէս	»	Գերձակեան
Գէորգ	Վարդապետ	Խլթիսեան
Վահան	Փահանայ	Գրիգորեան
Խաչատուր	»	Տ. Գաբրիէլեան
Յովհաննէս	»	Շահպաղեան

( Յէր +ուերիւրէն )

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. -- Խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. -- Ո՛ր խնդրոյն վրայ  
պիտի խօսիք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. -- Սա՛ տեղեկագրին  
առելի խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. -- Կրնաք խօսիլ , եթէ  
օրինական ղիտողութեան մը համար է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. -- ( Առ. Ս. Նախա-  
գանն ) Կաղաչեմ Ս. Հայր , ներեցէր ինչ որ  
պիտի ըսեմ : -- Համեմատական ընտրելեաց  
ցանկին մէջ վաճան վարդապետի անունն ալ  
կայ եղեր և վերցուեք է . արդեօք Ձեր Սրբադ-  
նութիւնը ինքնին ջնջած է զայն թէ՛ Կրօնա-  
կան ժողովոյ որոշմամբ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. -- Ես ջնջելի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. -- ( Շարունակելով )  
Փահանապետութիւնն՝ երեսփոխանական ընտ-  
րութեան կամ ընտրելիութեան իրաւունքէ  
զրկման արժանութիւնը միայն ժողովոյ կը վե-  
րապահէ և ոչ թէ Ս. Պատրիարքին : Երկրորդ :



մենք լսեցինք թէ Կրօն. Ժողովը չընդունիր Ձեր Սրբադնութեան այդ որոշումը, թէ Տ. Սուրբիս աս ֆառանայ, որ կամբաստանուի Տ. Վահան վարդապետէն, ինքն է եղեր բուէները կարգացողը և հաւարողը միանգամայն և Լսեցինք թէ Ձեր Սրբադնութիւնը ներկայ չէ եղեր նոյն օր բուէհամարին և ի լրոյ միայն իմացեր է եղելութիւնը: Ուրեմն եղած քննութիւնը թերի է. Տ. Սուրբիս քանչանայ պէտք է քննուի ի կողմին, ինչպէս նաև պէտք է լսուին Տ. Վահան վարդապետի բացատրութիւնները, թերեւս զրկում եղած է այս վերջնայն և թերեւս հակառակն հաստատուի թէ յանցաւոր է իրօք, ճշմարտութիւնը այս ճամբով միայն երեւան կենէ:

Պատրիարքի մը որոշումը անձնական կը նկատուի, ցորչալի չլուերոցուի ձեռնհաս ծուղովն: Սահմանադրութեան Տրբ. յորուածի արամադրութեամբ, Պատրիարքը ինքնին կրնայ տնօրէնութիւններ ընել, պայմանաւ սակայն որ յառաջիկային բերէ զայնս ժողովոյ և անոր ընդունելութեան ենթարկէ: Ներկայ պարագային մէջ այսպէս չէ եղած և առաջին օրէն սխալ քայլ առնել տուած են Ձեր Սրբադնութեան:

**ՆԱԽԱԳԱՆԱՆ ՍՐԲԱԶԱՆ** — Ես չեմ ընդունիր Փարիզեան էֆէնտիի այն խօսքը թէ՛ առաջին օրէն սխալ քայլ կ'առնում . . .

(Աղուկ և շփոթութիւն պահ մը կը տիրէ Ժողովարանին մէջ: — Ատենապետ էֆէնտի ՚ի ձայն զանգակի կը ջանայ հանդարտեցնել զժողովականան:

**ՆԱԽԱԳԱՆԱՆ ՍՐԲԱԶԱՆ** — (Շարունակելով) Ձեմ ընդունիր ըսի այդ խօսքը. ես, ինչպէս առաջին օրէն յայտնեցի, ուխտած եմ հաւատարիմ մնալ Սահմանադրութեան և այդ ուխտին կը հետևիմ:

(Չայս ասելով Ս. Պատրիարք Հայրն կուգէ մեկնել ժողովէն:)

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Այս մեր առաջին նիստն, Տեարք, խիստ ձախող սկսաւ. սակայն Դիւանս չը տխրի կասի բնաւ միշտ յարգել տալ օրինապահութիւնն:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Եթէ թոյլ տայիր ինձ սիրելէն հարկ եղած բացատրութիւն տալ, այս միջադէպն բնաւ տեղի չէր ունենար:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Չզլայի Ձեզ խօսք տայուս համար և կը յայտարարեմ թէ չարաչար գործածեցիր խօսելու աղատութիւնն և արտօնութիւնը: Եթէ Վահան վարդապետի խնդիրը սլաշպանելու դիտարութիւն առնէիք, պարտաւոր էիք զայն վիճարանութեան պահուն յայտարարել: Իսկ այն միջոյն բոլորովն ըստ իմ պահելէ և ինչդիրն ժողովայն քուէոյն մերժուելէ ետև, օրինակն դիտարութեան օրարտակաւ Սրբադն Պատրիարք Չօրուղած հարցումնիդ խիստ անպատշաճ ըլլալն պէտք է խոստովանիր:

**ՆԱԽԱԳԱՆԱՆ ՍՐԲԱԶԱՆ** — Եթէ ՚ը տեսնեք որ Ձեր Պատրիարքը իւր առաջին քայլին մէջ կը սխալի և Սահմանադրութեան դէմ կը դրած է, բացէ՛ք քննութիւն և երբ հաստատուի, ես կը լուծուիմ, իսկ եթէ ընդ հակառակն Ձեր Պատրիարքը Սահմանադրութեան հակառակ ընթացքի մէջ չէ գտնուած, պէտք է որ զրպարտիչը լուծուին երեսփոխանութենէ. և այս քննութիւնն կը պահանջեմ:

(Այս պահուս Ս. Պատրիարք Հայրն կը մեկնի Ժողովարանէն, որուն կը հետևի եկեղեցական և աշխարհական երեսփոխանաց մէկ մասն — բազմաթիւ երեսփոխանք Փափաղեան էֆէնտիի դէմ բողոքելով, բանակիր մը կը ծագին:)

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Անձնական դէպի մը համար խօսք կուղեմ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Մինչև որ ժողովն չը



հանդարտի, խօսք չեմ կրնար տալ ոչ ձեզ և ոչ ուրիշին: Ուստի կարգապահակներն հաստատելու համար վերջին ազդարարութիւնը կ'ընեմ ժողովին:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Բոց ներքին Աստուծոյ կը որոտաղբէ որ անձնական դէպի համար խօսք չզլացուիր Երեսօրհանին մը:

**ԱՏՆԱՊԵՏ ԷՖ.** — Այժմ որ ժողովը հանդերձ է կրնաք խօսիլ:

**ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.** — Երբ Եկեղեցական Երեսօրհանաց ընտրութեան տեղեկագիրը ներկայացաւ ժողովոյ, ես իրաւունք ունիի զիտու գրութիւն ընելու թէ բնասական գործադրութեանց ճիշդ ստույգերը չէր այն. յայդ տեղեկագիրը կատարելով լինելու համար պիտոք էր որ մէջը յիշատակուէր թէ Վահան վարդապետ խօսք դատութեամբ ամբաստանեալ լինելով, անունը քննուած է ընտրելոց ցանկէն և յաջորդն ստեղծուած է: Այս մասին եթէ իմ երեսօրհան կայ Ս. Պատրիարք Հօր չեմ կրնար վերագրել զայն. այս երկրորդ նիստն է որուն կը նախագահէ Ն. Արքայապետ ինքն, և բնականաբար այնքան վարժ չկրնար լինի խորհրդարանական սովորութեանց, կը ցուիմ որ իւրիմացութիւն մը պատահեցաւ մէջերեւոյ, վասն զի ես չըսի թէ « Ս. Պատրիարք Հայրն առաջի օրէն սխալ բայ մ'առաւ » այլ թէ « առաջին օրէն սխալ բայ մ'առնել տուին »:

**ՄԷՐԵՏԵՄ-ԳՈՂԻ Գ. ԷՖ.** — Խնդրոյն ըսկիրդէն զիտուութիւն ըրի որ Ս. Պատրիարք Հօր տուած բացատրութիւններէն յետոյ, Վահան վարդապետի բողբոն պէտք էր դառնար Ս. Պատրիարքին կամ կրօն. ժողովին դէմ, որպէս զի ժողովոյն նկատաւանն ենմարկելի լինէր: Իսկ այդ, թէ և ժողովն իւր օրոշումը տուաւ օրինաւորապէս, բոց փոխադեան էս ֆէնտիի զիտուութեանց վրայ Ս. Պատրիարք Հայրը կարծելով թէ իւր օրինապահութիւնը

ինչոցոյ ներքև ինկած է, յուզուեցաւ և քննութիւն սահմանեցաւ մեկնեցաւ: Տարակոյց չկայ որ եթէ Ն. Արքայապետ ինքն նոր սկսած չլինէր Երեսօրհանական ժողովոյ նախագահելու, չպիտի յուզուէր այս պարագայի մէջ, վասն զի ժողովոյն ստեղծ ցուէն անհերքելի ապացոյց մ'է որ Ս. Պատրիարք Հօր օրինապահութիւնը բնական կասկածանոց չէ ենթարկուած: Հետևապէս կը մնայ մեզ այս իւրիմացութիւնը պարզելով՝ փակել միջադէպն, և ինձ կը թուի թէ պէտք է որ Մայր-Գիտանն ի զիմաց ժողովոյն տայ այս յայտարարութիւնները Արքայան Պատրիարք Հօր և համոզէ թէ քննութեան տեղի չկրնար մնալ բանի որ Ն. Արքայապետ ինքն զէմ օրինաւոր բողբոն չկայ որ և է կողմ, և թէ ժողովոյ մէջ եղած այնորինակ մասնաւոր զիտուութիւնը Ատենապետին անձնական կարծիքն ըլլալէ ի գոտ ուրիշ նշանակութիւն չեն կրնար ունենալ և ժողովն այս պարագային մէջ չկրնար կարեւորութիւն ընծայել անոնց:

Մէրէէմ-Գոլի էֆէնտի այն յայտարարութեան վրայ եղած իւրիմացութիւնը բարձուած նկատուելով, Ատենապետ էֆէնտի այն միջադէպն փակեալ կը յայտարարէ և կանցնի ատենական միւս գործադրութեանց:

5.

Տեղեկագիր ի Ս. Նախագահն կար. Համագրային Ընտրողական ժողովոյ յաղագս կարողիկոսական ընտրութեան

**ԱՏՆԱՊԵՏ ԷՖ.** — Կաթողիկոսական վերջի ընտրութեան տեղեկագիրն, ժողովոյն կողմանէ կարգեալ պատուիրակ և միանգամայն Համադրային ժողովոյ նախագահ Ամեն. Յարաւանց Սրբաւորն կողմանէ յուրած լինելով Ազգային ժողովոյն, կը հրաւիրեմ Ատենապետին էֆէնտի ընթեմաւ զայն:



Բարձրագատիւ Նախագահի Աղգային Երեսփոխանական Ընդհանուր Ժողովոյ և Պատրիարքական Տեղապահի Հայոց Կ. Պօլսոյ պերճաշնորհ Գեորգայ Եպարզոյն Վարդապետի Ռուսնուզեան :

Աղգային Երեսփոխանական Պատկառելի Ժողովն Հայոց Թուրքիոյ գրութեամբ իւրով յՅՕէն Մարտի տարւոյս թիւ 79 յանձն առնէ մեզ զպաշտօն պատուիրակութեան առ իդիմաց համայն վիճակացն Հայոց Թուրքիոյ մասնակցել յընտրութեան Կաթողիկոսի ամենայն Հայոց, ըստ տրամադրութեան Աղգային Սահմանադրութեան, ըստ եղանակի բացատրելոյ ի տեղեկագրի, որ ի 16 Ապրիլի 1884 ամի, առաջի առնելով զցանկ երկի ընտելեաց Հայոց Տաճկաստանի թուով քուիցն որք են :

Ա. Ամենագատիւ Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոս Խրիմեան քուէ 30 Բ. Գերագատիւ Տ. Մեղրիսեղեկ Եպիսկոպոս Մուրատեան քուէ 42.

Գ. Գերագատիւ Տ. Խորէն Եպիսկոպոս Աշքբեան քուէ 18.

Որպիսի պաշտօնական թղթեանքն հասին 'ի ձեռս մեր ի ձեռն յատուկ ներկայացուցչի 'ի Դիմաց Աղգային Ժողովոյդ արժանայարգ և զգօնամիտ խաչակիր Յովհաննէս Աւագ քահանայի Մկրտեան, վանորոյ վութամբ ձեռք ծանօթս առնել զարդիւնս գործողութեան մերոյ Աղգային Ընդհանուր Ժողովոյն, յորում տեղակալք զթուր Պատրիարքական փոխանորդի :

Նախ քան պաշտօնապէս բացումն Ատենի Համազգային Կաթողիկոսական Ընտրողական Ժողովոյ, 'ի նախագատրաստական Ժողովի անդ 'ի թիւս այլոց բազ-

մաթիւ թղթեանց մերթ ընդ մերթ մտելոց 'ի Սիւնհոդոսն Հայոց Սրբոյ Էջմիածնի, վերաբերեալք այնմիկ գործողութեան, ի լուր Ժողովոյն ընթերցեալ եղև և թուղթն մերոյ պատուիրակութեան, ընթերցեալ եղև երկրորդապէս զինի բացման ընտրողական ատենի ի Մայր Տաճարի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, նախագատրաստ ատենախօսութեամբ մերով ըստ աւուրն պատշաճի, յորում բացատրելով զինհոթիւն և զնուիրականութիւն ներկայ գործոյն, առ որ յորդորելով զՀամազգային Պատկառելի Ժողովն ի յանդ հանել զայն տերամբ և յաջողընտրութեամբ արժանաժառանգ Գահակալի և յաջորդ Սրբազան Առաքելոյն Թագէտի և Բարդուղիմեայ և մեծի Պարթեալին Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, նա մանաւանդ ի սերտ և անխղճի պահպանել զկապ Համազգային դարաւոր միութեան ընդ սիրելի արեւակից եղբարց մերոց Հայոց Տաճկաստանեայց, անփոփոս պահպանելով զառաջտրիեան յԱղգային Երեսփոխանական Ժողովոյն զեռանուն ցանկն Կաթողիկոսական ընտրելեացն, որում սպառնայր բեկումն մրկածուի : Բայց փառք և զհոթիւն Ամենակարողին Աստուծոյ, որոյ ի Սուրբ կամս ապաստան արարաք զգործս ձեռաց մերոց ազօթիւք և պաշտամամբ ի Տաճարի Սրբոյ Էջմիածնի, և շեղահայեաց իմաստուն հեռատեսութեամբ, արխաիրտ տոկունութեամբ կամաց և բուռն ազգասիրական ըղձից գերամեծար աշխարհական և հոգեւորական պատգամաւորաց ազգիս, ընտրութիւնն արժանաւորագոյն գահակալի յԱթոռ Հայրապետութեան և յընտ-



հանրական կաթողիկոսութեան ամենայն Հայոց եզիտ զյաջող ելս, ի փառս և ի պարծանս ազգի, յօգուտ և ի շինութիւն Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ, և միաձայն ընտրութեամբ Համազգային Ժողովոյ ընկալաւ գերեսուն քուէս (30) Առաջնորդ վիճակին Հայոց Զմիւռնոյ Ամենապատիւ Տ. Մելքիսեդեկ Եպիսկոպոս Մուրատեան, իսկ երկրորդական սորին (կանդիդատ) Գերապատիւ Մակար Արքեպիսկոպոս ընկալաւ զվերջաւանն (16) քուէս, սոսկ ի կերականաց վանացս, բայց յաշարհական պատգամաւորաց և ի հոգևոր Առաջնորդաց նշանաւոր թէմից և ոչ զմին: Զընտրողական գործողութիւնս Համազգային Ժողովոյ՝ Սինօզն Ս. Էլմիածնի համաձայն օրինական կարգի պահանջմանն՝ ընդ ձեռնն երից ընտրեալ պատուիրակաց, յայտնից աւուրս ունի առաքել զայնս առ որ արժանն է, առ ի ներկայացուցանել Նորին Մեծութեան ամենաողորմած թագաւոր կայսեր ամենայն Ռուսաց ի հաստատութիւն:

Ահա՛ սպայէս ըստ կարեաց մերոց աւարտեալ զպաշտօն պատուիրակութեան ընդհանուր վիճակացն Հայոց Թուրքիոյ, եղեալն ի վերայ մեր յԱզգային Երեսօխոսանական Ժողովոյն, ամենայն հաւատարմութեամբ և զգուշաւոր շրջահայեաց հեռատեսութեամբ ըստ ըզձևից և բաղձնապէս Ազգիս մնամբ փափուքանքով ակնկալու աւետարալու հաստատութեան և շնորհաբեր դալատեան նորընտիր Հայրապետի Ազգիս, ի գիրկ մօրս լուսոյ կաթողիկէ Սուրբ Էլմիածնի:

Խոնարհ աղօթարար

Նախագահ Համազգային Ընտրողական Ժողովոյ և Տեղապահ Կաթողիկոսութեան ամենայն Հայոց:

ՄԿՐՏԻՉ ԱՐԲԵՊԻՍԿՍ ԲԱՐԱՄԵՆԱՅՑ

Ի 23 Ապրիլի 1885 ամի  
Ի Սուրբ Էլմիածնի

(Յե՛ր ընթերցե՛մ)

ՄԵԿՐԵՆՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅՑ. — Շատ ուրախ է Ազգային-ժողովս որ կաթողիկոսական ընտրութեան արդիւնքը ծանուցանող տեղեկագիրք մը կ'ընդունի այս անգամ՝ կաթողիկոսական Ամեն. Տեղապահէն՝ որ Թուրքիոյ Հայոց պատուիրակի պաշտօնը կատարած է մեծ արժանաւորութեամբ: Մկրտիչ Արքեպիսկոպոս առաջինն կը լինի որ Ռուսիոյ և Թուրքիոյ Հայոց միջև տիրող համբարշտութիւնը պոհպանելու նպատանքանդիր կը հանդիսանայ: Ուստի կ'առաջարկեմ որ այս առթիւ Ժողովս շնորհակալեաց քուէ տայ Ն. Սրբազնութեան:

ՁԱՅՆԵՐ — Կը կրկնեմք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ.— Կը խնդրուի Մէրեմէ-Գուլի էՖ.է որ իւր սոյն առաջարկն ի գիր առնելով յանձնէ Դիւանին:

Ատենապետ էՖ. ի սոյն հրաւերին վրայ, Մէրեմէ-Գուլի Յ. էՖ. ի գիր առնելով հետեւեալ առաջարկն, կը յանձնէ Դիւանին:

« Ազգային Ժողովս շնորհակալութեան քուէ կուտայ առ Ամենապատիւ Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Բարամեանց մեր պատուիրակութեան պաշտօնն արժանապէս կատարած և օրինաւորապէս առ Ժողովս տեղեկագրեղ վտրթացած լինելուն համար »:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ.— Անցեալ նստին Դիւանին յանձնուած էր նաև Պերպէրեան և Գուրգէն էՖ.ից կողմանէ հետեւեալ զրաւոր առաջարկն:

Կառաւարկեմք որ Ազգային Ժողովն բուէարկէ հետեւեալը.

« Ազգային Ժողովս իւր Սրբազան



« Նախագահէն տեղեկանալով Չմիւռնիոյ  
 « Առաջնորդ Տ. Տ. Մելքիսեդեկ Սրբազան  
 « Արքեպիսկոպոս Մուրառեանցի ընտրու-  
 « թեանն ի կաթողիկոսութիւն Ամենայն  
 « Հայոց, կը յայտնէ իւր խորին գոհու-  
 « նակութիւն այս արժանաւոր ընտրու-  
 « թեան համար » :

Ռ. Պերպերեան Յ. Գուրգեն

ՄԵՐԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Այդ առա-  
 ջարհութեան զիրն անցեալ նստին մէջ կրնար  
 քուէի զբոլիլ, բայց այսօր, որ Տեղեկագիր մը  
 եկած է և մենք շնորհակալութեան բռէ կու-  
 տամք Ամեն . Մկրտիչ Սրբազանի մեր իրա-  
 ւունքն օրինուորապէս պաշտօնանաձ լինելուն  
 համար, մեր այս բռէն իւր մէջ կ'ամփոփէ  
 նաև յիշեալ առաջարկն : Իսկ եթէ առաջար-  
 կութեան տէրերն կը պնդեն իրենց առաջարկի  
 ուրոյն բռէարհութեան վրայ, աչատ են :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՅ. — Մէրեքմ-Գուլի էֆ-  
 էֆի առաջարկած բռէն տարակոյս չկայ թէ  
 արդար բռէմ' է որուն կը ձայնակցիմք ամենքս  
 ալ, ըստ որում Բարսեանց Սրբազան յարգել  
 տուած է Թուրքիոյ Հայոց իրաւունքներն և  
 այնքան լուս կատարած մեր Պատուիրակի  
 պաշտօնը : Սակայն միւս կողմէ անուրանալի է  
 թէ՛ բռէկց արդիւնքն արժանի է ամենայն  
 գոհունակութեան, ըստ որում Մեղքեպետե-  
 թեան Ամենայն Հայոց՝ կը խոտանայ մեզ գե-  
 ղեցիկ օրեր և մեծամեծ բարեքրումներ : Ուս-  
 տի եղած ընտրութեան արժանաւորութեանն  
 համար առանձինն բռէ կ'առաջարկեմք մենք :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Մէրեքմ-Գուլի էֆ-  
 առաջարկած գոհունակութեան բռէն տալու  
 հարկը կը տեսնեմ, մանաւանդ անոր համար  
 որ մեր եռանուն ցանկը նոյնութեամբ ընդու-  
 նել տուած է Համագայոյն Ժողովին : Իսկ

երկրորդ առաջարկն տարբեր է և կը վերաբե-  
 ըր ընտրութեան արգեանց, որուն համար ևս  
 արժանի է որ Ժողովս մանաւորապէս գոհու-  
 նակութեան բռէ տայ :

ՃԱՆՈՒՄԵԱՆ Մ. ԷՅ. — Ես կ'առաջարկեմ՝  
 շնորհակալութեան բռէ տալ՝ ոչ թէ միայն  
 Բարսեանց Սրբազանին, այլ և այն ամէն աշ-  
 խարհական Պատգամաւորոց որք իրենց բռէն  
 տունն մի արժանաւոր եկեղեցականի :

ԹՆԿԵՐԱՆ Ա. ԷՅ. — Պատրիարք Սրբա-  
 զան իւր բացման ճառին մէջ յայտնեց թէ  
 Խոսն Ժողովոյ պաշտմամբ շնորհաւորական հե-  
 ազիր ուղղած է առ Մուրառեան Սրբազան :  
 Ես կը կարծեմ թէ Ժողովս առ այժմ՝ գոհ  
 պէտք է մնայ իւր Ս. Նախագահի այս զեկուց-  
 մամբ միայն, քանի որ տակաւին չենք զիտեր  
 թէ ի՞նչ պիտի լինի ընտրութեան եկըը : Ես  
 կանխաձայն կը գտնեմ Պէրպերեան և Գուրգէն  
 էֆէնդիներուն առաջարկն :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՅ. — (Թողով Դիւանն ,  
 իբր էրեսփոխան խօսք կանոն.) Իբր առա-  
 ջարհութեան տէր խօսք կուզեմ : — Հարկ է  
 զիտնալ թէ մեր առաջարկն ըլլած է նա-  
 խորդ նստի մէջ Ս. Պատրիարքի բացման ճա-  
 ունն, յորում գոհութեամբ յիշատակեցաւ  
 Ամեն . Տ. Մելքիսեդեկ Արք-Եպիսկոպոսի  
 ընտրութիւնն : Եւ որովհետև բացման ճառին  
 ի պատասխանի պատրաստուելիք Ռեզերձը կըր-  
 նայ ըլլալ որ յապաղի, ուստի կառաջարկեմք  
 նախապատուութիւն տալ Նախագահական ճա-  
 որի այդ կէտին և մեր գոհունակութիւնն ար-  
 տայայտել մասնաւոր քուէարհութեամբ :

ՃԱՏԵՐ. — Այս, զատ զատ բռէի  
 գրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ներկայացեալ տյն երկու  
 բանաձևներն ուրոյն ուրոյն կենթարկեմ Ժողո-  
 վայդ բռէին :



Չոյս ասելով, Ատենապետ էֆէնտի նախ քուէի կը դէն Մէրեէմ-Գուլը Յ. էֆէնտիի առաջարկն որ ԿԸՆԴՈՒՆՈՒՅԻ միաձայնութեամբ:

Ապա Ատենապետ էֆէնտի ժողովոյն ըըւէին կենթարկէ Պէրպէրեան և Գուրդէն էֆէնտիներուն կողմանէ ներկայացեալ առաջարկն որ նոյնպէս ժողովն ԿԸՆԴՈՒՆՈՒՅԻ մէկ բուէի դէմ միաձայնութեամբ:

6.

Պաշտօնագիր Ազգ. Վարչութեան յաղագս Երուսաղիմայ պարտուց բարձման խնդրոյ .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութեանց կարգին մէջ կոյ նաև Վարչութեան մէկ զիրն, Երուսաղիմայ պարտուց խնդրոյն մասին:

Ահաւասիկ այդ զիրն:

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Երեւոյնսանական ժողովոյ

Ազգային ժողովն Երուսաղէմի Ս. Աթոռոյն պարտուց բարձման մասին խառն ժողովոյ կողմէ 1884 Յունիս 30 թուականաւ մատուցեալ տեղեկագիրն նկատողութեան առնելով իւր 1883 Փետրվար 1ի նստի մէջ սոյն խնդրոյն վըրայ Ատենապետաց Դիւանին ներկայացուցած տեղեկագրոյն եզրակացութիւններն ընդունած, և յանձնարարած էր Ազգ. Վարչութեան ի գործ դնել Երուսաղէմի պարտուց բարձման համար առաջարկուած տնօրէնութիւնն, պարտաւորիչ դործերով նաև Պօլսոյ ազգայնոց վճարելիք բաժինն:

Ազգ. Վարչութեան Խառն. ժողովն

Պատկ. ժողովոյդ սոյն սրոյման և յանձնարարութեան վրայ՝ ճեռք առաւ անմիջապէս խնդիրն, և նկատելով որ սոյն պարտուց բարձման համար սահմանեալ տնօրէնութիւնն բազմակողմանի պարագաներ ունէր և զայն գործադրել՝ վարչութեան տեղեկագրին մէջ նախատեսեալ այլ և այլ միջոցներու կիրառութեամբն, ընդարձակ աշխատութեան կարօտ գործ մ'էր և արժանի մասնաւոր և անդուլ մտադրութեան, Ազգային Վարչութեան Խառն ժողովն Յանձնաժողով մը կազմեց, պաշտօն տալով անոր Ազգային ժողովոյ սրոյման բանաձևին համաձայն՝ պարտու պատշաճ կարգադրութիւններն ընել, նպաստից հաւաքման համար Գանձուց պաշտօնատան հետ սկսուած բանակցութիւններն շարունակել, դրամն գանձել, Ս. Աթոռոյն պարտքերն հատուցանել, յառաջիկային մէջ այլևս պարտք չգոյանալու համար պէտք եղած միջոցներն որդղել՝ բանակցելով Երուսաղէմի Ահն. Ս. Պատրիարքին հետ, և Վարչութեան հաղորդել իրաքանչիւր վեց ամիս իւր գործողութեանց համարն ևս մատուցանելով: Գանձնաժողովոյ անդամ կարգեցան,

- Գեր. Տ. Մատթէոս Ս. Եպիս. Իզմիրեան
- Վսեմ Նովհաննէս էֆ. Նուրեան
- » Սեպուհ » Մաքսուտեան
- Աղ. Բարսեղ » Հալաճեաց
- » Սենեքերիմ » Մանիկեան

Գանձնաժողովն իրմէ խնդրուած սոյն կարևոր ծառայութիւնն մատուցանելու համար առ Ազգն, և իւր թանկագին անվացութիւնն առ Վարչութիւնն թէև յօժարեցաւ ըստանձնել սոյն պաշտօնն, և գործին նախապատրաստական աշխա-



տուութեանց ձեռնարկեց, սակայն Աղգ. Վարչութիւնն Յանձնաժողովոյ ներկայացուցած գլխողութիւններէն համազուեցաւ թէ՛ այս ընդարձակ գործին պէտք եղած մղումն և փափաքուած կանոնաւորութիւնն տալու համար բաւական չէր միայն Յանձնաժողովոյ մը վերադարձել Յանձնաժողովն, ինչպէս Աղգ. Վարչութիւնն յաջողած էր ընել. այլ հարկ էր միանգամայն գործին մեծութեան աստիճանին համեմատութեամբ ընդլայնել անոր ձեռնհասութեան շրջանակն, լիազօր իշխանութիւն տաւնդել անոր՝ իւր գործառնութեանց պատասխանատուութիւնն վերագրելով իրեն, զնել զայն ուղղակի Ամեն Սրբազան Պատրիարք Հօր Նախագահութեան ներքև, ինչպէս էր նախորդ Յանձնաժողովն, և ուղղակի համարատու կացուցանել առ Աղգ. Ժողովն իւր կատարած գործառնութեանց համար, և այսպէս զայն գործօն վիճակի մէջ դնել Բայց այս նկարագրով Յանձնաժողովոյ մը կազմութիւնն Աղգ. Վարչութեան Խառն Ժողովն վեր գտաւ իւր ձեռնհասութենէն, և Աղգ. Երեսփոխանական Ժողովոյ հեղինակութեան և որոշման կարօտ համարելով զայն կը փութայ ինդիւրն ներկայել Պատկ. Ժողովոյդ ուշադրութեան և յիշեցնելով գործին ըստիպողականութիւնն և փափուկ հանգամանքն, որ արդէն ծանօթ են Ժողովոյդ, ինդրել որ բարեհաճի այս մասին պարտ ու պատշաճն որոշել, որպէս զի կարելի լինի գործն յառաջ տանիլ յաջողութեամբ

և օրինաւորութեամբ և փափաքուած արդիւնքն ձեռք բերել :

Մ'նամբ յարգանօք  
 Ի դիմաց Կրօնական Ժողովոյ  
 Վ. Ատենադարի Ատենապետ  
 Տ. Վրդ. Ոսկունեան Խորէն Արքեպիսկոպոս  
 Ի դիմաց Բաղաքական Ժողովոյ  
 Վ. Ատենադարի Ատենապետ  
 Պ. Պապօեան Ս. Մարտոսեան  
 23 Մայիս 1885  
 Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս սրտածնողիւրն բնականապէս ժողովոյս յառաջիկայ նախն Օրաւ կարգն պիտի տնցնի :

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, օրակարգ :

Հետեւորօր ԿՈՐՈՇՈՒԻ Վարչութեան տոյն սրտածնողիւրն անցնել յաջորդ նախն Օրաւ կարգն :

7.

Հարցում Ա. Էֆեհեմի Թնկրեանի ի մասին երուսաղիմայ պարտուց խնդրոյ

Ատենապետ Էֆէնտի նոյնպէս ժողովին կը ներկայէ Թնկրեան Աւետիս Էֆի հետեւեալ հարցադիրն, որ յետ լսելոյ, կարգէ յղել առ Երուսաղէմոյ Պարտուց Յանձնաժողովն ի նկատառումն :

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի  
 Աղգ. Երեսփոխանական Ժողովոյ,  
 Հարկն կ'ստիպէ խոնարհութեամբ  
 հարցնել Պատկ. Վարչութեան թէ՛ Ս.



Երուսաղէմայ պարտուց բարձման Յանձնաժողով՝ մինչ ցարդ միջոցներ ձեռք առած է, Կ. Պօլսոյ մերազնէից վրայ ևս բաշխում ընել Ս. Աթոռոյն պարտք :

Փափաքելի և խիստ իշտէ է զիտնալ զայս՝ տեղի չտալու համար այն ամէն դժգոհութեանց, որք կրնան ծագիլ ապագային մէջ :

Այս կենսական էջէ՛ր՝ որ իւր սահմանին մէջ Ազգի ամենամեծ խնդիրներէն առայինն է . Պատկ. Ժողովոյդ խորին ուշադրութեան յանձնելով կը սիրեմք փութով ստանալ սորա պատասխանն :

Ազգ. Երեսփոխան  
Աւետիս Թևկրեան

1885 Մայիս 24

Կ. Պօլսո

8.

Տեղեկագիր Նախամեռնութեան և Համալսարանութեան Դիւանաց ի մասին Ընծայարանի մը հաստատման :

ԱՏԵԱՊԵՏ ԷՅ. — Ասկից յառաջ, ինչպէս կը յիշէք, Պատ. Վարչութեան Կրօն. Ժողովոյ կողմանէ Ընծայարանի մը հաստատման մասին առաջարկութիւն մ'եկած էր Ժողովոյս որ յղեց Նախամեռնութեան և Համարակալութեան Խառն Դիւանաց Դ. քննութիւն և ի տեղեկագրութիւն : Այսօր յիշեայ երկու Դիւաններն բերած են իրենց տեղեկագրերն, զորս կը ներկայեմ Ձեզ :

Ատենադպիր էֆէնտի կընթեանու զայն :

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի  
Նչգային Ժողովոյ,

Ազգային Ժողովն, իւր 1885 Փետրուար 22ի նստին մէջ, Նախամեռնութեան Դիւանին յղած է Կրօնական Ժողովոյ պաշտօնագիրն Ընծայարանի մը հաստատման մասին :

Դիւանս օրինաւոր կը գտնէ այսպիսի առաջարկ մը, քանի որ Ազգ. Սահմանադրութեան 28րդ յօդուածը Կրօնական Ժողովոյ վրայ պարտք կը դնէ « արժանաւոր և բանիւրուն վարդապետներ և քահանայներ հասցունել » :

Նկատելով որ խնդրոյն ելմտական մասի նախաքննութիւնն Համարակալութեան Դիւանին յանձնուած է Նչգային Ժողովոյ որոշմամբ, Դիւանս անօգուտ չը կարծէր իւր զիտողութիւններն ընել զէթ ներկայացեալ կրթական յայտագրին վրայ :

Դիւանս կը յուսայ թէ Կրօնական Ժողովն, « Պատմութիւն ընդհանուր ազգաց » ըսելով, կ'մտնայ նաև քրիստոնէութեանէ դուրս հին և նոր կրօնից պատմութիւնն, որ կրնայ ճոխացունել հայ Եկեղեցականի մասնագիտութիւնն : Կը յուսայ նաև թէ Ընծայացուներու աշխատանց մէկ կարևոր մասը պիտի կազմեն բեմասացութեան կրթութիւնը, որոց օկտակարութիւնն ակներև է : Բանի որ Կրօնական Ժողովն իւր յայտագրին մէջ ընդունած է « սկզբունք Օսմանեան օրէնքադատութեան ըստ Քաղաքականին », Դիւանս կը յուսայ թէ նա տրամաբանական լինելու համար պիտի ընդունի նաև Թուրք լեզուի ուսուցումն : Ի վերջոյ, օգտակար կը կարծէ պահանջել Յրանսե-



րէնի ուսուցման ներմուծումն, որ կրնայ ընդարձակ ասպարէզ բանալ ընծայացուաց մտուոր զարգացմանն համար :

Յանձնարարելով ուրեմն Կրօնական ժողովոյ առաջարկի ընդունելութիւնն,

Մ՛նամք յարգանօք

Անդամք Նախաձեռնութեան Դիւանի  
Հ. Մագպուկեան

Մ. Զերագ (Տեղեկաբեր) Նշան Պ. Պոյանեան

14 Մարտ 1885

Բէրա

Վսեմապատիւ Ատենապետ էֆէնտի Ալգ. Երեսփոխանական Ընդհ. ժողովոյ

Պատկառելի Ընդհանուր ժողովդ փետրվար 22ի նստին մէջ Նախաձեռնութեան և Համարակալութեան Դիւանաց յղած էր առ ի քննութիւն՝ Ալգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական ժողովոյ կողմէ Ընծայարանի մը հաստատման մասին ներկայացեալ առաջարկն :

Եթէ Համարակալութեան Դիւանս չէր ուղեր խնդրոյն վրայ կարծիք յայտնել, առանց նախապէս սկզբան սա կէտն որոշելու թէ՛ Կրօնական ժողովն կարող է ինքնին դրամական խնդիր մը ժողովոյս բերել : Սակայն նկատելով որ Նախաձեռնութեան Դիւանն իր տեղեկադիրն պատրաստելով յանձնած է ժողովոյդ Դիւանին, կուգամք մենք ալ մեր քննութեան արդիւնքն հաղորդել աստանօր :

Նախ՝ Դիւանս անգործադրելի կը գտնէ Կրօնական ժողովոյ սոյն որոշումն թէ՛ Ընծայարան մը հաստատելու համար արտօնութիւն տրուի իրեն Պոյոյ իւրաքանչիւր թաղերուն տարեկան հասոյթին

3 0/0ը գանձել, ըստ որում Պատրիարքարանն իսկ մեծ դժուարութիւն կը կրէ Քանչալէրի տուրքն իսկ կանոնաւորապէս գանձելու և եթէ այսպիսի արտօնութիւն մը տրուի, այն ատեն կրկնակի տուրք մը առնուած պիտի լինի թաղերէն, և ի բաց առեալ մէկ քանի դիւրակեաց թաղեր, միւս թաղերը պիտի ներդրին իրենց գործոց մատակարարութեան մէջ :

Երկրորդ՝ ըստ որում այսպիսի Ընծայարանի մը հաստատութիւնը Պատրիարքարանի իրաւասութեան ներքե պիտի գտնուի, մեր կարծեօք հարկ է որ այս խնդրոյ համար քուէարկելի վարկն Ընդհ. ժողովոյս ներկայանայ Վլգային Պատրիարքարանի Ելմտացոյցի մէջ :

Ի դիմաց Համարակալութեան Դիւանի՝

Ատենապետ  
Կ. Սըվաճեան

10 Մայիս 1885  
Կալաթա

ՁԱՅՆՆԵՐ. — Օրակարգն անցնի՛ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ — Օրակարգն չանցած խոր կուզեմ : Կրօնական ժողովն կը խնդրէ Պատի Երեսփոխաններէ որ խնդրոյն ելմտական մասն միայն նկատողութեան տանուտ, վասն զի կրօնական և ուսումնական մասերն իրեն վերասպահեալ է անօրինել : Կրօնական ժողովն զիտէ թէ՛ այդ Ընծայարանի համար որպիսի ուսմանց ծրարդիր մը պատրաստել հարկ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Երբ խնդիրն Օրակարգ անցնի, յայնժամ Տ. Խորէն Սրբազան կրնայ խնդիր ընկ այդ կէտն, և ոչ թէ այժմ :

Ձայս սակաւ, Ատենապետ էֆէնտի կը յայտնէ թէ՛ սոյն կրկին տեղեկագրերն ևս պիտի անցնի Օրակարգի մէջ :



Բ.

Կազմութիւն նախաքննիչ Դիւանաց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ պիտի անցնի՞ր  
Նախտըննիչ Դիւանաց ընտրութեան, Դիւանիս կողմնէ նախապէս պատրաստեալ սրբադրելի ցանկին վրայէն :

Զայս ասելով Ատենապետ Է.Փ. վիճակաբուէհամարի քննիչ կը կարգէ ,

Յակոբ	Վ.Ր. Ա.	Փարսազեան
Կարապետ	Է.Ֆէնտի	Խիւճեան
Ռէթէոս	»	Պէրպէրեան
Միհրան	»	Տեօփմէնեան

( Թիւ բուժարկուաց 36 )

Բուժարկութիւն և բուէհամարն կատարուելով , բուէից ստատելութեամբ Նախաքննիչ Դիւանը կազմուեցան հետեւեալ իւրաքիւ :

Զեռնաստութեան Դիւան

Մատթէոս	Եպիսկոպոս	Իզմիրլեան
Գարեգին	Վարդապետ	Թաթարեան
Միքայէլ	Է.Ֆէնտի	Մամիկոնեան

Դաստիարակութեան Դիւան

Գարրիէլ	Է.Ֆէնտի	Նորատունկեան
Գասպար	»	Գասպարեան
Մկրտիչ	»	Մէլգպուրեան

Կալուածոց Դիւան

Յովհաննէս	Է.Ֆէնտի	Թորոսեան
Միհրան	»	Զօպանեան
Նշան	»	Պօյանեան

Համարակալութեան Դիւան

Կարապետ	Է.Ֆէնտի	Սըվաճըրեան
Գառնիկ	»	Յովակիմեան
Մկրտիչ	»	Ճանըմեան

Յարաբերութեան Դիւան

Յովհաննէս	Է.Ֆէնտի	Նուրեան
Համբարձում	»	Մաղպուլեան
Ռէթէոս	»	Պէրպէրեան

Իրաւաստութեան Դիւան

Մինաս	Է.Ֆէնտի	Զերալ
Յակոբ	»	Պօշտաքեան
Յարութիւն	»	Մէրեհմ. Գուլի

Նախաձեռնութեան Դիւան

Յովհաննէս	Գահանայ	Մկրեան
Յակոբ	Է.Ֆէնտի	Արշակ
Ղաղար	»	Հովուեան

Խմբագրութեան Դիւան

Կարապետ	Է.Ֆէնտի	Խիւճեան
Մկրտիչ	»	Մէլիքեան
Համբարձում	»	Ալաճաճեան

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍԿ. — Դիւանք իւրեանց Ատենապետներն ընտրելու համար միշտ զժտարութեանց կը հանդիպին : Ուստի կառաւարկեմ որ այս անգամ հրատարակելու մէջ որոշեալ անդ մը ցոյց արուի , որպէս զի անդ հաւարուելով Նախաքննիչ Դիւանաց անգամներն , ընդ փոյթ կարենան ընտրել իրենց Ատենապետներն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իզմիրլեան Սրբազանի ղրկողութիւնն իրաւացի է , և Դիւանս կը խօստանայ ըստ այնմ շարժիլ :



**ՄԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Գ. ԷՖ.**— Կը տեսնեմ թէ այդ ցանկին մէջ իմ անուն ալ դուռած է: Սակայն հարկ է գիտնալ թէ ես վիճակաւ դադարելի Երեսօրհանաց կարգին մէջն եմ և թերեւ երկու շաբաթէն իմ տեղս ուրիշ մը փոխանակէ: Ուստի կը խնդրեմ հրատարակելու կատակ զիս:

**ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ.** — Մըրեմէմ-Գուլի էֆ. թէ և դադարեալ կը նկատուի, սակայն հարկ է գիտնալ թէ Մայր-Եկեղեցւոյ Երեսօրհանական ընտրելեաց ցանկին մէջ կը գտնուելի և անտարակոյց վերընտրելի է: Ուստի պարտական է շարունակել զիւր պաշտօն մինչ ցվերընտրութիւն:

**ԶԱՅՆԵՐ** — Այս, այո՛:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը խնդրեմ որ այժմէն հրատարականի խնդիրներ չշարունակուին, և Գլխաններն միանալով ընդ փոյթ ընտրեն իրենց Ատենապետներն, որպէս զի նոր Գաղ-ժողովոյ ցանկի պարտաստութեան համար կարելի լինի ի նկատ հրաիրել Ատենապետաց Գլխանն:

(Սոյն սրահուն Ս. Պատրիարք Հայրն առաջնութեամբ Եկեղեցական մի քանի Երեսօրհանաց, կը մտնէ ի ժողովարան և կը վերաբաղմի յիւր Աթոռն):

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — (Առ Ս. Պատրիարք Հայրն) Ձեր Սրբազնութիւնը ներկոյ էր, երբ ժողովս վաւերացուց Եկեղեցական Երեսօրհանաց ընտրութեան տեղեկագիրն:

Արդէն Վահան վարդապետի մասին Ձերըջ Սրբազնութեան տուած բացատրութիւններէն կատարելագոյն գոհ չմտով ժողովս և թեր ու զմ կարծիքներն լռելէ յետոյ, որոշեց նկատողութեան չառնալ ներկայացեալ բոլոր քաղիւրն, մերժելով միանգամայն առ այս՝ Փա-

վազեան էֆէնտի ըրած օրինական դիտողութիւնն: Հետեւաբար այն միջադէպն ըստ օրինի վստակ կը համարի և ու է քննութեան տեղի շիրնար տալ:

Երեսօրհանութիւնս ապահով է և վստահ թէ Ձեր Բարձր Սրբազնութիւնն ընաւ Սահմանադրութեան հսկողական քայլ մը առած չէ այս խնդրոյ մէջ և միայն իւր Պատրիարքական իշխանութիւնն ի գործ դրած է:

**ՆԱՍՆԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ** — Վահան վարդապետ բողոքեալ իրաւունք ունէր, բայց ոչ այս տեղ, այլ կրօն. ժողովին մէջ: Ես բան մ' առաջարկեցի, որ պէտք էր նկատողութեան առնելը. կրնայ ըլլալ որ սխալ քայլ մ' առած ըլլամ. քննութիւն կատարեցէք և յօժարակամ կը լուծուիմ, եթէ Սահմանադրական օրինաց հակառակ վարուած եմ, վստահի ուխտած եմ նմա հուսատարիմ մնալու. այլ եթէ հակառակն հաստատուի, շրջադրեցք պէտք է մտածեն:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Հայր Սրբազան, եղած դիտողութիւնն ոչ թէ մասնաւոր նքատակաւ, այլ տեղեկագիրն մէկ օրինական թերութեան վրայ էր, որ լրացու Ձեր Սըրբազնութեան տուած բացատրութեամբն: Ժողովս գոհ է Ձեր այդ բացատրութեանէն, սըրխաման խնդիր բնաւ չիայ, հետեւագոյն ժողովոյս կողմանէ որ և իցէ քննութիւն չի կրնար տեղի ունենալ յայսմ մասին: Եթէ Վահան վարդապետի խնդիրը վերաքննութեան պէտք ունի, այն ալ միմիայն Ձեր Սրբազնութեան կրնայ խնդրել: Այս է ահա պարագայս Աղբային ժողովոյս սրուումն:

(Յատկեալաւ Երեսօրհաններ կը ձայնակցին Ատենապետ էֆֆի այն յայտարարութիւնն.)

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ժողովն փակելէ յառաջ, կը փութամ յայտնել թէ՛ յաջողդ նախ Օրակարգն է հետեւեալ.



Ա. Ատենական գործողութիւնք.

Բ. Ընտրութիւն Բ. և Գ. Ատենադպրաց Ազգային ժողովոյ .

Գ. Ուղերձ 'ի պատասխանի Նախագահական բարձման ճառին .

Դ. Ընտրութիւն ֆաղաբական ժողովոյ .

Ե. Տեղեկագիր Երևոական Յանձնաժողովոյ . — Ծրագիր Ազգային ուղղակի արոյ և Երևոացոյց 1885-86տի Ազգային Կեդրոնական անտուկի .

Զ. Պաշտօնագիր Ազգային Վարչութեան յաղաքս Երուսաղէմայ պարտուց խնդրոյ .

Է. Տեղեկագիր Համարակալութեան և Նախագահութեան Գլխանայ յաղաքս Ընծայարանի վր չատատման :


Ատենան կը վերնայ ժամը 6ին , յաջորդ նիստն 15 օրէն գումարելու որոշմամբ :

Ատենադպիր

Յ. ԳՈՒՐԳԷՆ

Ատենապետ

Տ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ





# Ն Ի Ս Տ Բ.

31 ՄԱՅԻՍ 1885

## ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՔ

ԿԵՂԵՍՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՔ  
ԵՆԵՐԵՍՏԱՆԵՐ

ԱՅՈՒՄ ԲՆԱԿԱՆ  
Ա. Վ. ԻՃԱԿ

- Ա. Վ. ԻՃԱԿ
- 1 Սիմէոն Եպս. Աէֆէրեան Բ 2
  - 2 Կարապետ Վ. Բագրատունի
  - 3 Վահան Վ. րդ. Տ. Մինասեան
  - 4 Կարապետ Քահ. Աէթեան Բ
- Բ. Վ. ԻՃԱԿ
- 5 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
  - 6 Մատթէոս Եպս. Իզմիրեան
  - 7 Յովհաննէս Քահ. Մկրեան Բ 9
  - 8 Գրիգոր » Աճէմեան Բ 2
- Գ. Վ. ԻՃԱԿ
- 9 Յակոբ Վ. Ա. Փախաղեան
  - 10 Խորէն Քահ. Փէշիվանեան Բ 2
  - 11 Ոսկի Քահ. Օհանեան
  - 12
- Դ. Վ. ԻՃԱԿ
- 13 Եղիշէ » Ա. յվաղեան Բ
  - 14 Յովհաննէս Վ. Սըշարունի
  - 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան Բ 2
  - 16
- Ե. Վ. ԻՃԱԿ
- 17 Յովսէփ Վարդ. Ա. յվաղեան
  - 18 Գարեգին » Թաթարեան Բ 2
  - 19 Սուքիաս Քահ. Ստեփանեան Բ
  - 20 Գարրիէլ » Խանճեան

- ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ, ԿԵՄԻԿ-ՎԱՅՈՒՄ  
ԵՆ, ԳՈՒՄ-ԳԱՐՈՒՆ ԴՈՒՐԱ
- 21 Գրիգոր Պէրպլեան Բ
  - 22 Կարապետ Աղարդմաճեան
  - 23 Բարթող Քելրքճիպաշեան
  - 24 Յ. Մէրեէմ-Գուլի
  - 25 Տիգրան Հիւնքեարպէյէնտ. Բ
  - 26 Աւետիս Սուրէնեան Բ Պ
  - 27 Տօթժ. Ա. յվաղեան Բ
  - 28 Գէորգ Ա. յվաղեան Բ Պ
  - 29 Յակոբ Եէմլնիճեան
  - 30 Յակոբ Գուրգէն
  - 31 Խաչիկ Կամարակեան
  - 32 Միհրան Խնճեան Բ 2
  - 33 Մարտիրոս Էքսերճեան Բ 2
  - 34 Մանուէլ Պէշիբեան
  - 35
  - 36
  - 37
- Բ. Վ. ԻՃԱԿ
- ՊԵՂԻՍՏԱՆ
- 38 Բարսեղ Հալաճեան Բ
  - 39 Յովհաննէս Քէրէտէճեան Բ
  - 40 Մելքոն Պարոնիկեան Բ
- ԵԿԵՒ-ԳԱՐՈՒ
- 41 Մարուպէ Յրէնկեան Բ Պ
  - 42 Պօղոս Էնքսերճեան Բ
  - 43 Յակոբ Պօշնակեան
  - 44

- 47 Գասպար Գասպարեան Բ
  - 48
- ԻՆՍԻԿՒՄՈՒՍ Ս. ԿԱՐԱՊԵՏ
- 49 Պօղոս Թորղոմեան Բ 2
  - 50 Տրդատ Փախաղեան
  - 51 Յակոբ Հաճեան Բ 2
  - 52
- Գ. Վ. ԻՃԱԿ
- ԳԱՍՅՈՒՄ-ԲԱՂՉԱ
- 53 Գասպար Զերազ Բ 2
  - 54
  - 55 Բերա
  - 56 Գրիգոր Աէլիմյէլճեան
  - 57 Ղազար Հովուեան
  - 58 Նշան Պօյաճեան Բ 2
  - 59 Քիչիկ Օրմանեան
  - 60 Սինքերիմ Մանուկեան Բ 2
  - 61 ՀամարձուՄաղ պուլե.
  - 62 Մանուկ Ասլանեան Բ 2
  - 62

### ՄԻՋԱԿԻՂ

- 63 Տիգրան Եուսուֆեան Բ
  - 64 Մկրտիչ Գաղանճեան Բ 2
  - 65 Մկրտիչ Ճանրեան
  - 66 Ստեփան Տամատեան Բ
  - 67
  - 68 Պէլգօզ Է. Ղալաբիա
  - 69 Միջայէլ Մամիկոնեան
  - 70 Մանուկ Մաքսուտեան Բ 2
- Գ. Վ. ԻՃԱԿ
- ՔՈՒԿԻՆՆԱՆՈՒՅ ԷՆ ԻՃԱՄԻԷ
- 69 Մկրտիչ Մէղպուրեան Բ
  - 70 Սինոն Մաքսուտեան Բ 2

Բ Բացակայութիւն առաջին :  
Պ » երկրորդ :  
Պ » բանաւոր պաճառու :



	Գատըզիւղ	
71	Գառնիկ Յովակիմեան	Բ 2
72	Կարապետ Հազարեան	Բ 2
	Նարըլը-Գաբու	
73	Միհրան Տէօքմէճեան	
	Եհնի-Մանայիկ Սամարիոյ	
74		
	Թօփ-Գափու	
75	Յարութիւն Թիրեաքեան	Բ
	Էլուպ Ս. եղիւս Էս. Ս.	
	Աստուածածին	
76		
	Գուրու-Ձեղմէ	
77	Կարապետ Սրվաճեան	
	Հիսար Էս. Պօյաձի-Գիւղ	
78		
	Նոր-Գիւղ Էս. Սրեհիա	
79	Սեպուհ Տէմիրճիպաշեան	
	Պալատ	
80	Մկրտիչ Կիւմրէճեան	Բ 2
81	Ռէթէոս Թաղէոսեան	
82	Ներսէս Երէցեան	Բ
	Քարակեօմրիսկ	
83	Յովաննէս Թորոսեան	Բ
84	Կարապետ Փանոսեան	Բ
	Ե. Վիճակ	
	Սամարիա	
85	Յակօբ Արշակ	
86	Յովաննէս Նուրեան	Բ
87	Ռուբէն Կիւմրէզկերտան	Բ Պ
88		
89		
90		
91		
92		
93		
94		
	Խասզիւղ	
95	Ռուբէն Պուրիւրեան	
96	Նիկողոս Թիւլպէնտճեան	
97	Նշան Փափաղեան	Բ
98		
99		
400		

	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՅՈՒԹՅՈՒՆՔ	
	Ա. Վիճակ	
	Չմշկածագ	
101	Գաղատիա	
102	Ատանա	
103	Մինաս Ձերազ	
	Սղեբղ	
104	Մատթէոս Ալէքսաննեան	Բ 2
	Եօզղատ	
105		
	Մալաթիա	
106	Գէորգ Վարդաննեան	Բ
	Իգմիր	
107		
	Եզիպտոս	
108	Աբրահամ Մուրատեան	Բ 2
	Բ. Վիճակ	
	Պրուսա	
109	Քրիստոստուր Դազարոսեան	Բ Պ
	Եւդոկիա	
110	Կարապետ Կիւրճեան	Բ Պ
	Ամասիա	
111	Համբարձում Ալաճաճեան	
	Բալու	
112	Յովաննէս Աղնաւորեան	Բ 2
	Եղեսիա	
113	Յակօբ Իւթիւճեան	
	Մանգրլիս	
114		
	Հաճըն	
115		
	Երզնկա	
116	Ռեթէոս Պէրպէրեան	
	Գ. Վիճակ	
	Կարին	
117	Սերովբէ Աղնաւորեան	Բ 2
	Քեօրանէս	
118	Աւետիս Թրնկրեան	
	Աղրիանուպօլիս	
119		

	Նիկումիդիա	
120	Կարապետ Ս. Իւթիւճեան	
	Ակն	
121	Յակօբ Գորեան	Բ
	Ղարանիսար	
122	Կարապետ Երէցեան	
	Արաբկիբ	
123	Կարապետ Խաչիկեան	Բ 2
	Բաղէղ	
124	Սրբիւար Արիիւրեան	
	Գ. Վիճակ	
	Թերիբրտաղ	
125	Տիգրան Գ. Սինանեան	
	Կեսարիա	
126		
	Խարբերղ	
127		
	Պալքեսէր	
128	Ստեփան Գօրջեան	
	Մուշ	
129	Ստեփան Փափաղեան	
	Տիվրիկ	
130	Նշան Գարագաշ	Բ 2
	Զէյթուն Էս. Մարաղ	
131		
	Տրապիզօն	
132		
	Ե. Վիճակ	
	Պաղտատ	
133	Կարապետ Սէթեան	Բ
	Տիգրանակերտ	
134	Միհրան Չօպանեան	Բ
	Վան	
135	Մարկոս Աղաբէգեանց	
	Աղբամար	
136		
	Հալկա Էս. Այնբաղ	
137		
	Սեբաստիա	
138	Մկրտիչ Յ. Մէլիբեան	
	Ռուսնուգ	
139		
	Բաբերղ	
140		



## ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԱՆԳԱՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեն—դէր
2.	»	Սիմէոն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Խլմիրլեան	
4.	»	Դարեգին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեն—դէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փափազեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	ԲՆՅ.	Միրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուքիաս	»	Ստեփանեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէհլիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

### ԱՆԳԱՄԻ ԲԱՂԱՔՕԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Այնաւորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այվաղեան	Տօք. Նշան	»	Բ. Արեն—դէր
3.	Գըլըճըրեան	Գէորգ	»	
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեն—դէր
5.	Խըտըրեան	Գրիգոր	»	
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	
7.	Հազարեան	Կարապետ	»	
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ. Արեն—դէր
9.	Մաքսուտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	
11.	Պապօեան	Պապի	»	
12.	Սթիմարաճեան	Գէորգ	»	
13.	Փէշտիմալճեան	Տօքթօր Տիգրան	»	
14.	Բիւրքճիխանլեան	Կարապետ	»	



# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական գործադրութիւնք .
1. — Վաւերացումն ժԶ. ժԷ. ժԸ. ժԹ. եւ Ի. նիտերու Ատենադրութեանց
  2. — Երեսօխանական Հրամարագիր Ռուբէն ԼՖՆտի Կիւմուզիէրտանեանի .
  3. — Հրամարագիր Մինաս Չերազ ԷՖ. Ի Իեր-Ատենադ պրութենէ Մայր-Կիւանի .
  4. — Տեղեկագիր Եկեղեցական Երեսօխանաց ընտրութեան եւ բողոքագիր Տ. Վահան Վրդ. Տ. Մինասեանի .
  5. — Տեղեկագիր Ի Ս. Նախագահ Կաթ. Համազդային Բնորդական ժողովոյ յաղպս Կաթողիկոսական ընտրութեան .
  6. — Պաշտօնագիր Աղգ. Վարդութեան յաղպս Երուսաղիմաց պարտուց բարձման խնդրոյ .
  7. — Հարցում Ա. ԼՖՆտի Թնիրեանի Ի մասին Երուսաղիմաց պարտուց խնդրոյ .
  8. — Տեղեկագիր Նախաձեռնութեան եւ Համարակալութեան Կիւանաց Ի մասին Հաստատման մի Բնծոյարանի .
- Բ. — Կազմութիւն Նախաքննիչ-Կիւանաց

